

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի

ք. Երևան

17 մարտի 2006 թվական

Նախագահում էր՝

Ա. Մարգարյան - ՀՀ վարչապետ, խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

- Վ. Ներսիսյանց - ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական,
խորհրդի նախագահի տեղակալ
- Ա. Հակոբյան - ՀՀ վարչապետի խորհրդական
- Ա. Գրիգորյան - Խորհրդի քարտուղար, «Զարգացման հայկական գործակալություն»
ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի
քարտուղարության պետ»
- Ա. Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- Վ. Առաքելյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
- Յու. Շուքրյան - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ
- Բ. Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
- Գ. Զուգասզյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական
կազմակերպության նախագահ
- Ռ. Աղզաշյան - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի
պրոռեկտոր
- Հ. Ներսիսյան - «Միգմա» ՍՊԸ-ի տնօրեն
- Հ. Խանջյան - «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ

Հրավիրվածներ՝

- Ա. Կիրակոսյան - ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
- Մ. Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայ-
նության հետ կապերի վարչության պետ
- Գ. Նիկողոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածք-

	ների վարչության պետ
Ս. Խանազադյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածք- ների վարչության գլխավոր մասնագետ
Ռ. Աթոյան	- «Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Է. Մանուկյան	- «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Մխիթարյան	- «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Դ. Սանդուխյան	- «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության, ծրագր համակարգող
Ա. Բաղդյան	- «Յունիքումփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Հ. Մուսայելյան	- «Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն
Ս. Մանուկյան	- «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրենի տեղակալ
Ժ. Ազիզյան	- ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետի տեղակալ
Ա. Ալեքսանյան	- «Արմինկո» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն,
Դ. Ավետյան	- USAID, ծրագրի համակարգող
Մ. Դան	- «CAPS» ծրագրի ղեկավար
Ն. Հան	- «CAPS» ծրագրում մրցունակության ավագ փորձագետ
Ա. Սարգսյան	- «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ
Ա. Մկրտչյան	- «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի
հանձնարարականների կատարման ընթացքի մասին.

Ա. Գրիգորյան

Ա. Հակոբյան

Տ. Դավթյան

2. Խորհրդի կազմի ռոտացիայի մասին.

Ա. Գրիգորյան

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի խորհրդի աշխատանքային խմբերի կազմերի և գործառնությունների հաստատման հարցը.

Ա. Գրիգորյան

Ա. Հակոբյան

4. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» միջոցառման կազմակերպման նպատակով համակարգող հանձնաժողովի, միջոցառումների ծրագրի և ժամանակացույցի հաստատման հարցը.

Ա. Հակոբյան

Տ. Դավթյան

Բ. Ենգիբարյան

5. 2006 թվականի Հայաստանի Հանրապետությունում էլ-բովանդակության ազգային մրցանակաբաշխության և տարածաշրջանային հաղթողների համար Գալա միջոցառման կազմակերպման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կազմի և գործառնությունների հաստատման հարցը.

Ա. Գրիգորյան

Գ. Չուգասզյան

6. Այլ հարցեր.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան« Ա. Մարգարյան)

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանը տեղեկացրեց, որ ընթացիկ նիստի օրակարգը կազմված է նախորդ նիստի հանձնարարականների հիման վրա և մենք այդ խնդիրները քննարկելու ենք հաջորդ հարցերում: Այդ պատճառով առաջարկվեց անցնել հաջորդ հարցի քննարկմանը: Որոշվեց համաձայնել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանի առաջարկին:

2. Խորհրդի կազմի ռոտացիայի մասին

(Ա. Գրիգորյան, Ա. Մարգարյան)

2. Ընդունել ի գիտություն Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի կազմում «Արմենթել ՀՀ» ՓԲԸ-ի գործադիր գլխավոր տնօրենի, «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի նախագահի, «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի նախագահի, «Լինք» ՍՊԸ-ի տնօրենի, «Ավտոմատ կառավարման համակարգերի ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի և «Իսմա» ՍՊԸ-ի տնօրենի փոխարեն տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի կազմակերպությունների ներկայացուցիչների ցուցակից՝ «Միգմա» ՍՊԸ-ի տնօրենին, «Ավիահինֆոստել» ՓԲԸ-ի գործադիր տնօրենին, «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահին, «Էլեկտրոնային Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրենին, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենին և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտորին ռոտացիոն կարգով ընդգրկելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2006 թվականի փետրվարի 27-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի անդամների՝ ռոտացիոն կարգով փոփոխվելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2003 թվականի ապրիլի 4-ի N 141-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N132-Ա որոշումը:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի աշխատանքային խմբերի կազմերի և գործառույթների հաստատման հարցը

(Ա. Գրիգորյան՝ Ա. Հակոբյան, Վ. Առաքելյան, Հ. Խանջյան, Դ. Ավետյան, Ն. Հան, Ա. Ավետիսյան, Ա. Մարգարյան)

3. Հաստատել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի

աշխատանքային խմբերի գործունեության կարգը՝ կարգում ներգրավելով աշխատանքային խմբերի կազմերին վերաբերվող և երկօրյա ժամկետում ներկայացված խմբագրական առաջարկները:

4. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» միջոցառման կազմակերպման նպատակով համակարգող հանձնաժողովի, միջոցառումների ծրագրի և ժամանակացույցի հաստատման հարցը

(Ա. Գրիգորյան« Ա. Հակոբյան, Գ. Չուգասյան, Բ. Ենգիբարյան, Վ. Ներսիսյանց, Հ. Մուսայելյան, Ա. Ավետիսյան, Ա. Մարգարյան)

4. 2006 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումները համակարգող հանձնաժողովի նախագահ Ա. Հակոբյանին՝ հանձնաժողովում հանգամանալից քննարկել միջոցառումների ծրագիրը, ժամանակացույցը, միջոցառումների ցանկը և հաջորդ նիստում ներկայացնել մանրամասն տեղեկատվություն:

5. 2006 թվականի Հայաստանի Հանրապետությունում էլ-բովանդակության ազգային մրցանակաբաշխության և տարածաշրջանային հաղթողների համար Գալա միջոցառման կազմակերպման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կազմի և գործառնությունների հաստատման հարցը

(Ա. Գրիգորյան« Գ. Չուգասյան, Բ. Ենգիբարյան, Ա. Մարգարյան)

5.

ա) Հաստատել 2006 թվականի Հայաստանի Հանրապետությունում էլ-բովանդակության

ազգային մրցանակաբաշխության ծրագիրը, կազմկոմիտեն և ժյուրիի անդամների ցանկը.

բ) «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ Գ. Չուգասյանին, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանին և «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն Կ. Վարդանյանին՝ միջազգային էլ-բովանդակության ցուցահանդեսը «DigiTecExpo2006» ցուցահանդեսի շրջանակում կազմակերպելու նպատակով՝ քննարկել և ներկայացնել առաջարկ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումները համակարգող հանձնաժողովին:

6. Այլ հարցեր

(Ա. Գրիգորյան« Բ. Ենգիբարյան, Վ. Առաքելյան, Ա. Բալդրյան, Դ. Սանդուխյան,
 Հ. Խանջյան, Ա. Հակոբյան, Ժ. Ազիզյան, Գ. Նիկողոսյան, Գ. Չուգասյան,
 Ա. Ավետիսյան, Ա. Մարգարյան)

6. ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանին, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանին և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝ համապատասխան աշխատանքային խմբերում՝

ա) երկամսյա ժամկետում կազմակերպել քննարկումներ «Պետական տուրքի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի «Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2228-Ն որոշման վերաբերյալ, և ըստ անհրաժեշտության ներկայացնել առաջարկություններ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին.

բ) 15-օրյա ժամկետում նախապատրաստել Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարական ուղղված համապատասխան պետական կառավարման մարմինների ղեկավարներին՝ տրամադրել ամբողջական տեղեկատվություն իրենց համակարգերում

իրականացվող և ՏՀՏ բաղադրիչ պարունակող վարկային և (կամ) դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև համապատասխան որոշումներով ստեղծված կամ վերոնշյալ ծրագրերի շրջանակներում գործող կազմակերպությունների վերաբերյալ:

Խորհրդի նախագահ,
ՀՀ վարչապետ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Մարգարյան

Խորհրդի քարտուղար

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Գրիգորյան